ՄԵԾԱՆՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ, ԱԶԳԱՅԻՆ–ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ
(Գ. Բ. Ղարիբջանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)*

"Այժմ, երբ լրանում է Ձեր 75 տարին, ավելի պարզ է երևում, թե որքան համապատասխանում է Ձեր գործունեությունը մեր ժողովրդի և հայրենական գիտության շահերին: Ձեր մեծ եռանդը թույլ է տալիս Ձեզ ուղղել հասարակության ուշադրությունը դեպի գիտական, հասարակական, քաղաքական այն հարցերը, որոնք այսօր կարևոր են մեր ժողովրդի համար":

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Լրացավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Գևորգ Բագրատի Ղարիբջանյանի ծննդյան 100-ամյակը: Սերունդների հիշողության մեջ նա հետք է թողել իբրև Անդրկովկասի սոցիալիստական, կոմունիստական կազմակերպությունների և հեղափոխական շարժումների, հայ նշանավոր գործիչների կյանքի ու գործունեության, ազգային-ազատագրական պայքարի ուսումնասիրման և լուսաբանման, հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցերի, Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության բնագավառներում խոշոր վաստակ ունեցող, գիտակազմակերպչական հմտությամբ առանձնացող, քաղաքական ուրույն ճանապարհ անցած անձնավորություն:

Գ. Ղարիբջանյանը ծնվել է 1920 թ. մայիսի 5-ին Ալեքսանդրապոլ քաղաքում (հետագայում՝ Լենինական, այժմ՝ Գյումրի)՝ մանկավարժ, հրապարակախոս, բոլշևիկ, Մայիսյան ապստամբության ղեկավարներից Բագրատ Ղարիբջանյանի ընտանիքում: Մինչև 1934 թ. ապրել ու սովորել է Լենինականում, ապա տեղափոխվել է Երևան, 1935–1937 թթ. ուսումը շարունակել Երևանի Ն. Կրուպսկայայի անվան (այժմ՝ Ն. Աղբալյանի) միջնակարգ դպրոցում: 1937 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) պատմության ֆակուլտետ: Նկատենք, որ դեռևս ուսանողական տարիներին ի հայտ է եկել նրա պատմագիտական կողմնորոշումը. 1941-ին ուսանողական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուում տպագրվել է

* Ներկայացվել է 05. III. 2020 թ., ընդունվել է տպագրության 25. III. 2020 թ.:

“Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության գործունեությունը 1917 թվին” ծավալուն զեկուցումը: 1941-ի հուլիսին ԵՊՀ-ի չորրորդ կուրսի գերազանցիկ, Ստալինյան թոշակառու ուսանողը կամավոր մեկնել է բանակ՝ կարճատև զինվորական դասընթացներ անցնելով Վրաստանի Թելավի քաղաքի ռազմահետևակային ուսումնարանում, լեյտենանտի կոչումով որպես գնդացրային դասակի, ապա՝ վաշտի հրամանատար մարտնչել է Անդրկովկասյան, Կալինինյան և Արևմտյան ռազմաճակատներում: Ի դեպ, հենց պատերազմի դաշտում 1942 թ.՝ իր ծննդյան օրը, ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը և մինչև կյանքի վերջը հավատարիմ մնում նրա գաղափարներին: 1943 թ. հոկտեմբերին Ռուդնյայի, Սմոլենսկի ազատագրման համար մղված մարտերում Գ. Ղարիբջանյանը վիրավորվել է, ապաքինվելուց հետո շարունակել զինվորական ծառայությունը: Եղել է զինվորական թղթակից Անդրկովկասյան ռազմաճակատի “ԲԳԿԲ մարտիկ” (հետագայում՝ “Լենինյան դրոշ”) թերթում, պատերազմի ավարտից հետո ծառայել է 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի “Կարմիր զինվոր” թերթում՝ դրսևորելով ժուռնալիստ-հրապարակախոսի փայլուն ունակություն: Այդ ընթացքում զուգահեռաբար սովորել է ԵՊՀ-ում, ընդունվել ասպիրանտուրա:

Գ. Ղարիբջանյանը զորացրվել է 1948-ի սեպտեմբերին[1]: Նշենք, որ, լինելով Հայրենական մեծ պատերազմի մասնակից և վետերան, նա սրբությամբ է պահպանել պատերազմում զոհվածների հիշատակը, իր մարտական ընկերների սխրանքների կենդանի հիշողությունը, որոնց բացմիցս անդրադարձել է գիտական-հրապարակախոսական գործերում, հրապարակային ելույթներում:

Ասպիրանտուրան ավարտելուց հետո Գ. Ղարիբջանյանը 1948 թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ “Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917–1920 թվականներին” թեմայով, ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հրատարակում է իր առաջին ուսումնասիրությունները՝ նվիրված հայ ժողովրդի նոր և նորագույն ժամանակների սոցիալական ու ազգային-ազատագրության պատմության հարցերին՝ “Պայքար սովետական իշխանության հաղթանակի համար Հայաստանում (1917–1921 թթ.)” (1953 թ.), “Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեվոլյուցիան հայ ժողովրդի ազատարարն է” (1954 թ.), “Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թվականին” (1955 թ.) և այլն: 1955 թ. Գ. Ղարիբջանյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ “Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում” թեմայով, որը նույն թվականին հրատարակում է հայերեն և ռուսերեն: Մենագրությունը ներկայացնում է Հայաստանի տնտեսական ու քաղաքական

---

[1] *Տե՛ս Կ. Ա. Հարությունյան, Մ. Գ. Սահակյան. Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի, Երևան, 1988, էջ 180–181:*

կացությունը XIX դարավերջերին և XX դարասկզբներին, ցույց է տալիս սոցիալիստական հեղափոխության նշանակությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրում:

Գ. Ղարիբջանյանին 1957 թ. շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: 1965 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971-ին՝ ակադեմիկոս: 1977–1982 թթ. Գ. Ղարիբջանյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ապա՝ Պատմության ինստիտուտի Հայ հասարակական մտքի և մամուլի պատմության բաժնի վարիչ: 1985 թ. մինչև 1999 թ. ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության կենտրոնը: 1965–1976 թթ. եղել է ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ կրթության մինիստրությանն առընթեր բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի անդամ: Գլխավորել է ԳԱ նախագահությանն առընթեր Արտասահմանյան գաղափարական հոսանքների պրոբլեմային խորհուրդը (1978 թ.) և ԽՍՀՄ ԳԱ "Միջազգային բանվորական և ազգային-ազատագրական շարժումների պատմության" կոմպլեքսային պրոբլեմի գիտական խորհրդի հայկական սեկցիան (1979 թ.), եղել է մի շարք գիտական խորհուրդների անդամ: Գիտական-հետազոտական աշխատանքներին զուգահեռ ծավալել է գիտամանկավարժական գործունեություն. 1947–1999 թթ. դասախոսել է ԵՊՀ-ում և այլ բուհերում:

Գիտամանկավարժական աշխատանքը Գ. Ղարիբջանյանը հաջողությամբ զուգակցել է կուսակցական ու պետական պաշտոնների հետ: 1948–1950 թթ. եղել է Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար, 1951–1954 թթ.՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի ԽՄԿԿ պատմության սեկտորի վարիչ, 1968–1977 թթ.՝ նույն մասնաճյուղի տնօրեն: 1954–1961 թթ. Գ. Ղարիբջանյանը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի, գիտության, կուլտուրայի և ուսումնական հաստատությունների բաժինների վարիչի տեղակալ էր, դպրոցական բաժնի վարիչ: Ավելի քան յոթ տարի՝ 1961–1968 թթ., եղել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար: Ընտրվել է ԽՄԿԿ XXII և XXIII համագումարների պատգամավոր, ԽՍՀՄ VI–VII, ՀԽՍՀ VIII–IX գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր, 1954–1981 թթ.՝ ՀԿԿ ԿԿ անդամ, 1966–1969 թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու:

Իսկապես, զարմանալ կարելի է, թե նման պատասխանատու պաշտոններում գտնվելով, ինչպես է Գ. Ղարիբջանյանը կարողացել գրել ու տպագրել 75 գիրք ու գրքույկ, շուրջ 400 գիտական, հրապարակախոսական, հուշագրական և գրական հոդվածներ[2]:

Բազմիցս գրվել է, որ Գ. Ղարիբջանյանը, ապրելով խորհրդային իշխանության տարիներին, իր գիտական հետաքրքրությունների դաշտ է բերել թեմաներ ու խնդիրներ,

[2] 1941–1982 թթ. Գ. Ղարիբջանյանի աշխատությունների ժամանակագրական ցանկը տե՛ս Գևորգ Բագրատի Ղարիբջանյան, Երևան, 1982, էջ 39–71:

որոնց մի մասն այսօր վերանայվում և վերարժևորվում է, սակայն չի կորցնում գիտական արժեքը: Քանզի գրելով աշխատություններ Անդրկովկասում հեղափոխական շարժումների մասին՝ պատմաբանը երբեք կուլ չգնաց գիտական ու գաղափարախոսական կաշկանդումներին, մշտապես հայացք հառեց ազգային-ազատագրական պայքարին՝ դրանք հաճախ զուգադրելով հեղափոխական շարժումներին: Դրանով իսկ Գ. Ղարիբջանյանը խորհրդային պատմագիտության մեջ ձևավորեց մի նոր գիտական հայեցադրույթ, ըստ որի՝ հեղափոխական շարժումներն ու ազգային-ազատագրական պայքարը շատ հաճախ ունեին նույն խնդիրները, նույն ենթատեքստերը: Անդրադառնալով ազգային ազատագրության խնդիրներին, անգամ այնպիսի աշխատությունների մեջ, ինչպիսիք են "Վ. Ի. Լենինը և Անդրկովկասը" (եռահատոր, 1970–1975 թթ.), "Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը" (1960 թ.), "Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները (1893–1924)" (1967 թ.), "Վ. Ի. Լենինը և հայ գործիչները" (1980 թ.) և այլն, պատմաբանն առաջին պլան է մղել սեփական ժողովրդի գոյության հարցերը[3]:

Լինելով Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն՝ Գ. Ղարիբջանյանը բարձրաձայնում էր ազգային-ազատագրության մասին ["Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին" (1986 թ.)], իր աշխատություններում ներկայացնում ազգային գործիչների, որոնց անուններն արգելքի տակ էին: 1989-ին գրելով բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մասին ("Ակնարկներ հայ-բուլղարական բարեկամության պատմության")՝ ակադեմիկոսն այդ շարժումը միջոց էր դարձրել անդրադարձ կատարելու Անդրանիկ Օզանյանին, ներկայացնելու մեր ժողովրդի պատմության մեջ հիրավի եզակի ժողովրդական առաջնորդին: Ուսումնասիրվող նյութի քաջ իմացության հետ մեկտեղ՝ Գ. Ղարիբջանյանը խորհրդանշում էր նաև գիտական խիզախությունը: Հենց դա էլ նրան տարավ մի շարք թեմաների հետազոտմանը, ազգային խնդիրների կարևորմանը: Գիտական խիզախման, ազգային-ազատագրական պայքարին նվիրվածության արգասիք էր նաև նրա "Տարոնի արծիվը" (1996 թ.) աշխատությունը, որը նվիրված էր Մախլուտոյին՝ Սմբատ Բորոյանին, մի անհատականության, ով իրենով պայմանավորեց ֆիդայական շարժման բազմաթիվ ձեռքբերումներ: Չմոռանանք նաև Գ. Ղարիբջանյանի համարձակ ու անաչառ մոտեցումները մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող, Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի ԻԽՍՀ-ն և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանին 1966

---

[3] *Այս թեմայով Գ. Ղարիբջանյանի ուսումնասիրությունների մասին մանրամասն տե՛ս Ա. Ն. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Գևորգ Ղարիբջանյան (ծննդյան 60-ամյակի առթիվ).– ՊԲՀ, 1980, № 2, էջ 246–247, Գևորգ Բագրատի Ղարիբջանյան, էջ 13–16:*

թ. նոյեմբերի 12-ին ուղղած գրությունը՝ ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկվելիք տեղեկանքի կապակցությամբ[4]:

Ղեկավարելով ԳԱ հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության կենտրոնը՝ Գ. Ղարիբջանյանը լայնածավալ աշխատանք է կատարել հայագիտության բնագավառում: Այստեղ նրա ղեկավարությամբ կատարվել են այնպիսի ուսումնասիրություններ, ինչպիսիք են՝ "Հայոց պատմության հիմնահարցեր", "Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը", "Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին" և այլն: Ղարաբաղյան շարժման առաջին տարիներին՝ 1989 թ., նրա խմբագրությամբ լույս տեսավ "Վերակառուցումը և ազգային հարաբերությունները (Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջ)" ուսումնասիրությունը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պատմաբանին հետաքրքրել են XIX դարավերջը և XX դարասկիզբը՝ մեր պատմության բարդագույն շրջանները, որոնք դժվարին տարիներ էին քաղաքական ու կուսակցական խմորումներով, գաղափարախոսական հակասություններով: Գ. Ղարիբջանյանի բոլոր կենսագիրները նշել են, որ նա պատմությանն ու պատմականությանն անդրադառնում էր յուրովի՝ հավատարիմ մնալով պատմական իրողություններին, միաժամանակ ներկայացնում իր սեփական մեկնաբանությունները՝ համադրականության շնորհիվ հասնում պատմաշրջանի ամբողջական ընկալմանը: Պատմություն և իրադարձություն, պատմություն ու անհատ՝ ահա այն գիտական հետազոտման շրջանակը, որով Գ. Ղարիբջանյանը ներկայացնում է Ստեփան Շահումյանին, Բոգդան Կնունյանցին, Ալեքսանդր Մյասնիկյանին, Ստեփան Ալավերդյանին և շատ ուրիշներին: Խորհրդային պատմագիտությունը գրեթե անդրադարձ չէր կատարել Ստ. Շահումյանին և Ալ. Մյասնիկյանին, կցկտուր էին նրանց մասին պատկերացումները, խեղաթյուրված էին Բաքվի կոմունային գործունեությանը վերաբերող տեղեկությունները: Ընդգծված ու կարևորված չէր Ստ. Շահումյանի դերը, մասնավորապես, Անդրկովկասի հեղափոխական իրադարձությունների ձևավորման և մարքսիզմի տարածման գործում: Գ. Ղարիբջանյանը, համակողմանիորեն ներկայացնելով ինչպես Ստ. Շահումյանի կենսագրությունը, այնպես էլ Բաքվի կոմունայի պատմական նշանակությունը, առաջինը մեր պատմագիտության մեջ վերջինիս գոյության մեջ տեսավ ու արժևորեց հայապահպանության գործոնը, ինչին հետագայում անդրադարձավ մեկ անգամ ևս՝ գրելով "Բաքվի կոմունան ի նպաստ հայապահպանության" բովանդակալից

---

[4] Տե՛ս Ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյան: Գիրքը կազմել և հրատարակության են պատրաստել Բագրատ և Ստեփան Ղարիբջանյանները, Երևան, 2015, էջ 23–25: Նկատենք, որ Գ. Ղարիբջանյանի 95-ամյակին նվիրված այս ժողովածուն ընդգրկում է նմուշներ նրա գիտական ու գրական ժառանգությունից, ժամանակակիցների հոդվածներ և հուշ-բնութագրումներ նրա մասին, ինչպես նաև՝ կյանքին ու գործունեությանն առնչվող փաստաթղթեր, նյութեր, խոսուն լուսանկարներ:

և ուշագրավ հոդվածը[5], որը նոր լույս է սփռում Բաքվում հայ ավանդական կուսակցությունների գործունեության վրա: Խորհրդային տարիներին արգելվում էր գրել Հնչակյան և Դաշնակցական կուսակցությունների դրական դերի մասին, մինչդեռ Գ. Ղարիբջանյանը, օգտագործելով հարուստ աղբյուրագիտական նյութ, իրական գնահատական տվեց Դաշնակցության ու Բաքվի կոմունայի կապին, հայերի անվտանգությանը միտված համատեղ քայլերին:

Գ. Ղարիբջանյանը մի քանի առիթներով գիտական հետաքրքրությունների կենտրոն է բերել զորավար Անդրանիկ Օզանյանին: Նրա հանդեպ սերն այնքան մեծ էր, որ, լինելով Լենինականի կուսքաղկոմի առաջին քարտուղար, Հայաստանում առաջին անգամ փողոց անվանակոչեց մեծ զորավարի անունով՝ Ա. Օզանյան՝ չվախենալով ասեկոսեներից ու հետապնդումներից: Ընդ որում, այդ փողոցը ձգվում էր դեպի հայ-թուրքական սահման՝ դեպի Կարս: Անդրանիկի կյանքն ու գործն ակադեմիկոսի համար յուրատեսակ գիտական հավատամք դարձան. 1990 թ. հրատարակեց "Ժողովրդական հերոս Անդրանիկը" մենագրությունը (որը, ի դեպ, նման վերնագրով առաջին գիրքն է՝ տպագրված Խորհրդային Հայաստանում), երբ ձևավորվում էր մի նոր ազգային-ազատագրական պայքար՝ Ղարաբաղյան շարժումը: Նորահայտ փաստաթուղթ նյութերի միջոցով պատմաբանը վեր հանեց ու պատասխանեց բազմաթիվ պատմական խրթին հարցերի, լուսաբանեց, մասնավորապես, Անդրկովկասում ազգամիջյան բախումների դրդապատճառները, թուրք-թաթարական նկրտումները: Եվ Ղարիբջանյանի աշխատությունը, որը նաև լույս տեսավ ռուսերեն, պատմության ու ներկայի ինքնատիպ զուգակցումն էր. այդ գրքի միջոցով բացահայտվում էին պատմական այնպիսի իրողություններ, որոնք նպաստում էին նաև Ղարաբաղյան հիմնահարցի ամբողջական ընկալմանը: Ի դեպ, անուրանալի է Գ. Ղարիբջանյանի ջանքերը "Զորավար Անդրանիկ" հայոց համազգային միության ստեղծման գործում (եղել է միության նախաձեռնող խմբի, ապա՝ նախագահության անդամ, ընտրվել միության պատվավոր նախագահ):

Իր գիտակցական ողջ կյանքն ապրելով խորհրդային իշխանության օրոք՝ Գ. Ղարիբջանյանը դարձավ այդ իրականության առաջամարտիկներից մեկը, ամեն ինչ ծառայեցրեց իր ժողովրդի բարգավաճմանը, ձեռքբերումների արձանագրմանը: Ի տարբերություն շատերի, նա բռնապետություն չէր համարում կոմունիստական իշխանությունը, ուրախանում էր, որ հատկապես այդ տարիներին հնարավոր դարձավ վերածնել Հայաստանը, ստեղծել հզոր գիտություն և մշակույթ: Նա նաև անկախ պետականության շրջանի դեմքերից էր, որովհետև իր աշխատություններով նպաստեց անկախության գաղափարի ամրապնդմանը: Ազգային պետության գլխավոր հիմնախնդիրներից մեկը՝ Ցեղասպանության ճանաչումը, նրա համար սոսկ կոչ ու կարգախոս չէր, ըստ այդմ՝ մի շարք աշխատություններ նվիրեց մարդկության դեմ գործված մեծագույն ոճիրներից

---

[5] *Տե՛ս ՀՀ ԳԱԱ "Լրաբեր հասարակական գիտությունների", 1999, № 1, էջ 34–47:*

մեկին և Յեղասպանության իրողության արժևորումը գիտական շրջանառության մեջ դրեց օտարազգի մտավորականների գնահատումներով, նրանց հաղորդած տեղեկությունների հետազոտմամբ:

Ականավոր պատմաբանը "Հայոց ցեղասպանությունը և համաշխարհային հասարակայնությունը" վերնագրով ռուսերեն մենագրության մեջ (1989 թ.) անդրադարձ է կատարել Յեղասպանության փաստի համաշխարհային արժևորմանը, ներկայացրել առաջադեմ մտավորականության կարծիքն ու վկայությունները: Հայերի զանգվածային կոտորածների դեմ բողոքի ձայն են բարձրացրել Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Սերգեյ Գորոդեցկին (Ռուսաստան), Անատոլ Ֆրանսը, Անտուան Մեյեն, Ժակ դը Մորգանը (Ֆրանսիա), Արմին Վեգները, Յոհաննես Լեփսիուսը, Հենրի Մորգենթաուն, Յոզեֆ Մարկվարտը (Գերմանիա) և շատ ուրիշներ: Ըստ էության, Գ. Ղարիբջանյանն առաջիններից է գիտական շրջանառության մեջ դրել մամուլում, տարբեր աղբյուրներում սփռված նրանց նյութերը, դրանց միջոցով ներկայացրել Յեղասպանության դատապարտման ու ճանաչման առաջին արձագանքները:

Ուրույն գործ է նաև "Հայոց ցեղասպանությունը պատմության դատաստանի առաջ" վերնագրով ռուսերեն ուսումնասիրությունը (1996 թ.): Գրքույկը բացվում է ռուս անվանի գրող, հրապարակախոս, Արևմտյան Հայաստանում հայկական կոտորածներին ականատես Սերգեյ Գորոդեցկու "Հայաստանին" հայտնի ձոն-բանաստեղծությամբ: Իբրև բնաբան՝ հեղինակն ընտրել է Անատոլ Ֆրանսի խոսքը. "Խոցոտված է հայոց ոգին, բայց այն կրկին կհառնի: Այն քիչ արյունը, որ նա դեռ պահել է իր երակներում, գերթանկ արյուն է, որից կծնվեն հերոսական սերունդներ: Մի ժողովուրդ, որը չի ուզում մեռնել, չի մեռնի երբեք": Անշուշտ, պատահական չէր, որ ուսումնասիրության համար նման բնաբաններ էր ընտրում պատմաբանը. այդպես նա Յեղասպանության միջազգային ճանաչման համար նախադրյալներ էր ստեղծում, իր ուսումնասիրության մեջ տալիս այս եզրի բացատրությունը, օգտագործում բազմաթիվ նոր ի հայտ եկած փաստաթղթեր ու վկայություններ:

Գ. Ղարիբջանյանի գիտական ահռելի կենսագրությանը համադրվել է նաև աշխատանքային հարուստ կենսագրությունը, որի ամենապայծառ ու հագեցած շրջանն առնչվում է Լենինական-Գյումրուն, երբ 1960-ականներին եղավ իր ծննդավայր քաղաքի ղեկավարը, նրա վերաշինության նախաձեռնողը: Բազմաթիվ անդրադարձներ են եղել Գ. Ղարիբջանյանի գործունեության այս շրջանին, ներկայացվել է այն հսկայական ազգաշեն աշխատանքը, որը կատարել է[6]:

Գ. Ղարիբջանյան գիտնական անձի, քաղաքացու, հայի, մարդ-անհատականության դիմանկարն անկատար կլիներ, եթե չհիշատակեինք մի կարևորագույն փաստ.

[6] *Մանրամասն տե՛ս "Գյումրի: Քաղաքը և մարդիկ" ժողովածուում (Երևան, 2009 թ.) և Հ. Կ. Գաբրիելյանի "Լենինական" գրքում (Երևան, 1984 թ.):*

հայտնի իրողություն է, որ նաև նրա ջանքերի շնորհիվ 1990-ականների սկզբին հիմնավորվեց Գիտությունների ակադեմիայի պահպանման անհրաժեշտությունը:

Հատուկ ուզում ենք ընդգծել Գ. Ղարիբջանյանի կողմնորոշումը. այն է՝ հայ ժողովուրդն ունեցել է և ունի մշտական ու հուսալի բարեկամ՝ ի դեմս ռուս մեծ ժողովրդի: Հիշենք ու հիշեցնենք. երբ Ղարաբաղյան շարժման օրերին Հայաստան ներխուժելու թուրքական իրական վտանգ կար, նա այն քչերից էր, ով սթափ գնահատելով իրավիճակը՝ հրապարակայնորեն հայտարարեց. "Երբ ռուսական տանկերը Հայաստանում են, հայը կարող է հանգիստ լինել": Դրա խոսուն վկայություններից է, որ այսօր Հայաստանի սահմանները հայ զինվորների հետ պահպանում են ռուսական զորքերը: Լինելով այդ տարիներին ծնունդ առած "Ռուսաստանի բարեկամներ" հասարակական կազմակերպության հիմնադիրներից մեկը՝ կարողացավ կամուրջ դառնալ նորանկախ Հայաստանի և Ռուսաստանի գիտնականների, մտավորականների հետ համագործակցության, բարեկամական կապերի ամրապնդման գործում:

Գ. Ղարիբջանյանն առաջին հայ պատմաբաններից էր, որի աշխատությունները տպագրվել են Ռուսաստանում, Ուկրաինայում, Վրաստանում, Ադրբեջանում, Անգլիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Բուլղարիայում: Տիրապետելով մի քանի լեզուների (գերմաներեն, մասամբ՝ անգլերեն, լեհերեն, բուլղարերեն)՝ բազմիցս մասնակցել է միջազգային գիտաժողովների, գիտական գործուղումներով (սկսած 1956 թ.) եղել է աշխարհի բազմաթիվ երկրներում: Մեծ ճանաչում ուներ Խորհրդային Միությունում. նրա հետ մարդկային սերտ հարաբերություններ էին հաստատել ինչպես հայ, այնպես էլ ռուս նշանավոր գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, ռազմական ու պետական գործիչներ: Ջերմ բարեկամությամբ էր կապված մարշալ Հովհաննես Բաղրամյանի, Համազասպ Բաբաջանյանի, Անաստաս և Արտեմ Միկոյանների, Տիգրան Պետրոսյանի հետ: Նրան բարձր են գնահատել Մարտիրոս Սարյանը, Դմիտրի Նալբանդյանը, Նիկողայոս Նիկողոսյանը, Արամ Խաչատրյանը, Վալենտինա Տերեշկովան, Մստիսլավ Ռոստրոպովիչը, Վասիլի Սոլովյով-Սեդոյը, Լյուդմիլա Զիկինան, Դավիթ Օյստրախը, Ռասուլ Համզատովը և շատ ուրիշ անվանի դեմքեր: Գ. Ղարիբջանյանն ուշագրավ, անաչառ հուշագրություններ ունի Ավետիք Իսահակյանի, Արամ Խաչատրյանի, Վիկտոր Համբարձումյանի, Մարտիրոս Սարյանի, Հովհաննես Բաղրամյանի, Հովհաննես Շիրազի, Պարույր Սևակի և նշանավոր այլ գործիչների մասին, որոնց հետ եղել է մտերիմ հարաբերությունների մեջ:

Ակադեմիկոսը հեղինակություն ուներ նաև Սփյուռքի տարբեր շրջանակներում: Առաջիններից մեկն էր, ով հրավիրվեց մասնակցելու Ցեղասպանության 75-ամյակին նվիրված ոգեկոչման արարողություններին՝ որպես հալեպահայության պատվավոր հյուր. կարդաց դասախոսություններ՝ այդպես նաև Ցեղասպանագիտության հայաստանյան ձեռքբերումները հասանելի դարձնելով Սփյուռքին:

Գ. Ղարիբջանյանը, ինչպես ասվեց, գիտության անխոնջ կազմակերպիչ էր, վաստակաշատ մանկավարժ: Շուրջ կես դար ԵՊՀ-ում և հանրապետության այլ բուհերում դասավանդել է հայոց պատմություն, վարել հատուկ դասընթացներ, մեծապես աջակցել երիտասարդ գիտնական ու մանկավարժական կադրերի պատրաստման գործին: Բազմիցս եղել է թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս:

Մեծանուն գիտնականը ճանաչված ու անխոնջ հասարակական գործիչ էր՝ Ժուռնալիստների (1960 թ.) և Գրողների (1976 թ.) միությունների, Հայրենական մեծ պատերազմի վետերանների միության նախագահության անդամ, Սովետահունգարական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի հիմնադիր և անփոփոխ նախագահ (1968 թ.), "Գիտելիք" ընկերության նախագահության ու ԽՍՀՄ Փիլիսոփայական ընկերության (1975 թ.) անդամ: Օժտված բնատուր ձիրքով՝ գրել է բանաստեղծություններ, առակներ, երգիծական պատումներ, հուշեր[7]:

Հայրենիքը բարձր է գնահատել Գ. Ղարիբջանյանի գործունեությունը. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի գործում ցուցաբերած խիզախության, մարտական ու աշխատանքային ծառայությունների համար փոխգնդապետը պարգևատրվել է 30 շքանշանով ու մեդալներով, այդ թվում՝ "Խիզախության համար" մեդալով, "Հայրենական պատերազմի II աստիճանի" շքանշանով, 2 անգամ արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի (1960, 1966 թթ.), "Պատվո նշան" (1971 թ.), "Ժողովուրդների բարեկամության" շքանշանների (1980 թ.), Ստ. Շահումյանի անվան թիվ 1 մրցանակի (1979 թ.), Խ. Աբովյանի, Ս. Ի. Վավիլովի մեդալների, "Գեորգի Դիմիտրով" հոբելյանական մեդալի: Եղել է Քութայիսի (1964 թ.) և Լենինականի (1968 թ.) պատվավոր քաղաքացի:

Ավելացնենք. Գ. Ղարիբջանյանը լայնախոհ մտավորական էր, կյանքի մարդ, մեծ հումորի տեր, պարզ ու հասարակ, անկեղծ և անմիջական, բարյացակամ անձնավորություն, ընտանիքին անձնատուր եղած մարդ, կենցաղում ծայրահեղ համեստ:

Գ. Ղարիբջանյանը փոթորկումներով լեցուն կյանք է ունեցել, եղել են նաև վայրիվերումներ, նյութվել են դավեր, սակայն անկոտրում կյանքով՝ հպարտությամբ նայել է ապագային: Դրա խոսուն վկայությունն են 1975 թ. նրա գրած հետևյալ տողերը.

Ձեր խորամանկ ու կեղծավոր դավերի դեմ,
Խարդախության ու մեղրաձոր կոչերի դեմ,
Ես պարզում եմ անկեղծության սուրբ դրոշս,
Թեկուզ ընկնեմ հպարտության սուրը ձեռքիս,
Իմ մայր հողը ինձ չի դավի,
Ժողովուրդն իր ջերմ սրտում ինձ կպահի,

[7] *Տե՛ս Ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյան, էջ 26–81:*

Ես հպարտ եմ իմ անկոտրում հպարտությամբ[8]:

Մեծանուն գիտնականն ու ազգային-պետական գործիչը վախճանվեց 1999 թ. դեկտեմբերին:

Ընթերցողի մոտ բնական հարց կարող է ծագել՝ ինչո՞ւ է հենց տողերիս հեղինակը խոսք ասում ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանի 100-ամյակի առթիվ: Ասեմ՝ 1977 թվականից աշխատելով Գիտությունների ակադեմիայի համակարգում՝ նախ Հրատարակչության խմբագիր, ապա "Լրաբեր հասարակական գիտություններ"-ի ամսագրի, այնուհետև "Պատմաբանասիրական հանդես"-ի պատասխանատու քարտուղար, հասկանալի է՝ տարիներ շարունակ շփվել եմ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանի հետ, զգացել նրա ջերմ, ուշադիր և հոգատար վերաբերմունքն անձիս հանդեպ՝ և՛ որպես շարքային խմբագիր, և՛ որպես գիտաշխատող: Բացի այդ, նրա որդիների, ակադեմիայի աշխատակիցների՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու Բագրատ և պատմական գիտությունների թեկնածու Ստեփան Ղարիբջանյանների ընկերն եմ (ի դեպ, նրանց հետ սովորել եմ միևնույն՝ Ն. Կ. Կրուպսկայայի, այժմ՝ Ն. Աղբալյանի անվան դպրոցում), ճանաչում եմ թոռանը՝ պատմական գիտությունների թեկնածու Գևորգին, աշխատել նրա զարմիկի՝ տաղանդավոր դիվանագետ Գեղամ Ղարիբջանյանի հետ:

Մեզանում քչերն են եղել Գևորգ Բագրատի Ղարիբջանյանի նման գիտնական ու մարդ, ում բնորոշ է եղել հավատարմությունը դավանած գաղափարներին, քաղաքական և բարոյական այն սկզբունքներին, որով ապրել ու գործել է:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

[8] *Նույն տեղում, էջ 56:*